

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՃԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ
XVII—XIX ԴԱՐՆԵՐԻ ԺԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Սկսած XVII դ. երկրորդ կեսից, երբ հայ իրականության մեջ ստեղծվում են առաջին ճարտասանական ձեռնարկները, ձևավորվում է ուսմունք խոսքի նյութական ու տեխնիկական միջոցների մասին և ստեղծվում է պատկերացում խոսքի բաղադրիչ տարրերի վերաբերյալ:

Ինչպես խոսքի նյութական ու տեխնիկական միջոցների, խոսքի բաղադրիչ տարրերի, այնպես էլ նրա առանձնահատուկ այլ կողմերի հարցերը քննվել են դեռևս հին հունական, ապա նաև հռոմեական հռետորական արվեստի համակարգում:

Բառերը, արտահայտություններն ու նախադասությունները, որ կազմում են խոսքի նյութական բաղադրիչները, խոսքի մեջ դործածվում են երկու կերպ՝ ԻՆՔՆԱՐԱՆԱԿԱՆ (ավտոլոգիական) նշանակությամբ, այսինքն՝ իրենց ուղղակի, անմիջական, բուն իմաստով, և ՓՈԽԱՐԱՆԱԿԱՆ (մետալոգիական) նշանակությամբ, այսինքն՝ իրենց ոչ ուղղակի, ոչ անմիջական կամ բուն իմաստով, այլ այնպես, որ հաղորդվի ոչ միայն այն, ինչ ասվում է, այլև մի երկրորդ հավելյալ գաղափար ևս, որն անմիջաբար չի տրված բառերի, արտահայտությունների կամ նախադասությունների առկա իմաստների մեջ, գաղափարներ, որոնք վերջիններս չեն ունենում լեզվական այլ մակարդակներում կամ խոսքից դուրս առնվելիս:

Հուլիս և հոգնակի մտածողները խոսքի գեղագիտության մեջ կարևոր տեղ են հատկացրել լեզվի նյութական միավորների փոխաբանական գործածություններին, որոնք նրանց կողմից բաժանվել են երկու խմբի՝ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (հուն. Τρόπος, լատ. Tropus) և ՁԵՎԵՐԻ (հուն. Σχῆμα, լատ. Figura): Փոխակերպություններն առաջ են գալիս խոսքի մեջ բառերը, արտահայտությունները և նախադասությունները ոչ իրենց ուղղակի նշանակություններով դործածելու հետևանքով, այսինքն լեզվական այդ միավորներն առնված են լինում այնպես, որ ասվի մի բան և հասկացվի մի այլ բան: Ձեվերը խոսքի մեջ բառերի, արտահայտությունների և նախադասությունների այնպիսի գործածությունների հետևանքով են առաջ գալիս, որ լեզվի նյութական այդ միավորները պահում են իրենց իմաստը, սակայն վերջինիս վրա ավելանում է հույզ, գաղափարն արտահայտվում է ավելի ուժեղ, ավելի խոր, դառնում ազդու և տպավորիչ: Լեզվական հիշյալ միավորների փոխաբանական գործածությունները խոսքին տալիս են պատկերավորություն ու արտահայտականություն, առարկայականություն ու դիպուկություն, օժտում նրան անսովորյալ: Խոսքի գեղեցկության, կենդանության և մի շարք այլ արժանիքների գաղտնիքը գտնվում է նրա կառուցվածքի ու տեխնիկական հնարավորությունների կիրառությունների ու համադրությունների արվեստի մեջ:

Ահա թե ինչու լեզվի ոճական համակարգ ասելով հասկանում ենք մտածողության արտահայտման միջոցների ու տեխնիկական հնարավորությունների կարգերի ու կատեգորիաների ամբողջությունը:

Հարգացնելով հին հույների ու հռոմեացիների ըմբռնումներն ինչպես լեզվի նյութական ու խոսքի տեխնիկական կողմերի, այնպես էլ հատկապես փոխակերպությունների ու ձևերի մասին, և դրանք տարածելով հայոց լեզվի երևույթների վրա, հայ ճարտասանները, դեռևս XVII դ. վերջերին, ստեղծեցին առաջին գիտական պատկերացումը մեր լեզվի ոճական համակարգի մասին:

Քննելով հայոց լեզվի ոճական համակարգի հարցերի հետ կապված հայ ճարտասանների ըմբռնումները, դորժ ենք ունենում երեք կարգի երևույթների հետ: Դրանք են. ոճական հիմնական գիտակարգերի դասակարգումը, ոճական կարգերի ըմբռնումները և տերմինաբանությունը: Մի կողմ թողնելով վերջին երկու հարցերը, մենք այստեղ քննության նյութ ենք դարձրել միայն առաջինը՝ հայերենի ոճական համակարգի ըմբռնումը:

Ոճական հիմնական կարգերի դասակարգման առաջին փորձը և ոճաբանական տերմինաբանության սկզբնավորողի պատիվը պատկանում է XVII դ. երկրորդ կեսի նշանավոր մտածող, քերական ու ճարտասան Հովհ. Հոլովին: Հարց ու պատասխանի ձևով գրված իր աշխատության¹ մեջ նա փոխակերպությունները² բաժանում է երկու տեսակի՝ «բառերի» և «իմաստների»: Ըստ որում, եթե խոսքի մեջ բառն է գործածվել իրեն ոչ հատուկ նշանակությամբ, ապա գործ ունենք ԲԱՌԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ հետ, իսկ եթե նախադասություն³ բովանդակությունն է առնված մի այլ նշանակությամբ, ապա գործ ունենք ԻՄԱՍՏԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ հետ: Հովհ. Հոլովը դիտարկում է բառերի փոխակերպությունների 7 տեսակ և կոչում անդաբերություն, խելամտություն, անդրանդություն, փոխանդություն, անվանաստեղծություն, ապավորություն և անդրառություն, իսկ իմաստների փոխակերպությունները բաժանում է 5 տեսակի և կոչում այլագություն, շրջախոսություն, անդրելություն, վերաշվություն և հեզնություն: Փոքրածավալ այս աշխատության մեջ հեղինակը հստակորեն տարբերակում է փոխակերպությունների հիշյալ տեսակներն իրարից, տալիս ճիշտ սահմանումներ և բերում դիպուկ օրինակներ:

Բառերի ու նախադասությունների փոխաբանական գործածությունների մյուս խումբը կազմում են ՁԵՎՅՈՐԸ, որոնք Հովհ. Հոլովը նույնպես առաջին անգամ դասակարգելով՝ բաժանում է երկու խմբի՝ ԲԱՌԵՐԻ ՁԵՎՅՈՐԻ («ձևք բառից») և ԻՄԱՍՏՆԵՐԻ, ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ կամ ՄՏՔԵՐԻ ՁԵՎՅՈՐԻ («ձևք դիտարկությանց»): Այս դեպքում ևս բաժանման հիմունք է դառնում բառի կամ նախադասության գործածությունը փոխաբանական նշանակությամբ: Ըստ որում՝ եթե բառերը խոսքի մեջ պահպանում են իրենց իմաստները, սա-

¹ Հովհաննէս Հոլով Վանանդեցի, Համոստութիւն ճարտասանականի արուեստի, Սարսել, 1674:

² Հովհ. Հոլովը հիշյալ աշխատության մեջ հուն. Τρόπος տերմինի փոխարեն գործածում է այլափոխություն բառը: Փոխակերպություն տերմինն առաջին անգամ այս նշանակությամբ գործածել է Ստ. Ազնեցն իր «Ճարտասանութիւն ի հինգ դիրսա աշխատության մեջ» (Վենետիկ, 1775):

³ Անցյալի հայ քերականության ու ճարտասանության մեջ բառերի կապակցությունն ու արտահայտությունը լեզվական կամ քերականական միավոր չեն ճանաչվել:

կայն յուրահատուկ գործածության հետևանքով խոսքին տալիս են հուզականություն, մտքերին ու գաղափարներին հաղորդում սաստկություն, ուժգնություն ու թափ, ստեղծում տեականության պատրանք, խոսքը դարձնում արտահայտիչ ու տպավորիչ և այլն, ապա գործ ունենք բառերի ձևերի հետ, իսկ եթե ոճական այս օժանդակ գաղափարներով հագեցված են հանգես գալիս նախադասությունները, ապա գործ ունենք մտքերի ձևերի հետ:

Բառերի ձևերն ըստ Հովհ. Հովովի առաջ են գալիս երեք եղանակով՝ «առակցության» (միմյանց կցումով), «ի բաց բարձմամբ» (զեղչումով) և նմանությամբ՝ նա տարբերում է բառերի՝ առակցության և առաջացող 9 ձևեր և կոչում վերակերկում, համադարձում, բաղնյութում, համապատկում, անդրաժողովում, հագնահանվածություն, համանունություն, բազմաթվություն և համաստիճանություն: Զեղչումով առաջացող ձևերը նա բաժանում է 5 տեսակի և կոչում խոհականություն, տրոհություն, ալոծություն, տրամալծություն և համըմբռնություն, իսկ նմանությամբ առաջացող ձևերը՝ 8 տեսակի՝ առանունություն, նմանահագություն, նմանավերջություն, զուգավանկություն, հակադրություն, համափոփոխություն, վերադրություն և երկվություն: Անհամեմատ բարդ պատկեր են ներկայացնում իմաստների ձևերը: Այդ պատճառով էլ հեղինակը թեև դրանք բաժանում է 4 ենթախմբի, սակայն առանց որևէ հիմունք ցույց տալու: Առաջին ենթախմբի մեջ դնում է 3 ձև՝ հարցում, պատասխան և ենթադրություն, երկրորդ ենթախմբի մեջ՝ 8 ձև՝ կանխում, վերադրություն, երկբայություն, հաղորդակցություն, դերանձնություն, այլադարձում, ստորակերպություն և ներալություն, երրորդ ենթախմբի մեջ՝ 6 ձև՝ վարձակերպություն, երևակերպություն, համառում, զանցառություն, պատեհություն և շնորհում, իսկ չորրորդ ենթախմբում՝ 13 ձև՝ ներադրություն, հեգնություն, տրամատություն, ներում, աղբյուրում, ըզում, անեծք, բացականություն, արտագում, զգում, «պարարումն մոռացության», տգիտության կեղծում և «վերահիշեցումն նախասացելոց»:

Բառերի ու նախադասությունների փոխաբանական գործածությունների այսպիսի դասակարգումը, որի հիմքում ընկած են հին մտածողների ըմբռնումները, տրամաբանական լինելով հանդերձ, բխում է մեր լեզվի ոգուց և ընդհանուր գծերով արտացոլում է ոչ միայն գրաբարի, այլև ժամանակակից հայերենի ոճական հիմնական երևույթների էությունը:

Հովհ. Հովովի առաջադրած այս համակարգը որդեգրեց XVII դ. վերջի և XVIII դ. առաջին կեսի խոշորագույն մտածող, փիլիսոփա ու ճարտասան Խաչատուր Էրզրումեցին: Իր ճարտասանական երկու աշխատություններում էլ՝ նա փոխակերպություններն ու ձևերը քննում է առանձին-առանձին, որոշ փոխակերպությունների համար առաջադրում նոր անվանումներ (անդրաբերության փոխարեն նա շրջանառության մեջ է դնում փոխաբերություն և այլոգության փոխարեն այլաբանություն տերմինները) և նույնությամբ ընդունելով բառերի ձևերը, դիտարկում է իմաստների նոր ձևեր, ապա սրանք բաժանում երկու

⁴ Խաչատուր Էրզրումեցի, Համառոտական իմաստափրկին, հ. I, Վենետիկ, 1711, էջ 74—98 (սա մեզ հայտնի միակ ճարտասանական երկն է՝ հորինված շտապոն), նույնի, ճարտասանություն արարեալ և շարադրեցեալ ի Խաչատուր Էրզրումեցու, Վենետիկ, 1713:

Լսութիւնմբի Հովհ. Հովովի քննած իմաստների ձեւերը նա կոչում է հիմնական
և սրանց վրա ավելացնում երկու ձև ևս՝ այլաբանությունն ու հակադրությունը,
իսկ մյուս ձեւերը կոչում է «մնացորդաց»։ Այս ենթախմբում նա դնում է նաև
արտահայտութեան այնպիսի եղանակներ, որոնք ինչ-որ բանով շեղվում են
սովորականից և ըստ էութեան ձեւեր չեն։ Շուրջ հինգ տասնյակի հասնող այս
ձեւերի համար միշտ չէ, որ հեղինակը հայերեն հարմար անվանումներ է գտ-
նում, ուստի նա ստիպված դիմում է լատիններեն տերմինների, երբեմն փա-
կաղծում տալով հայերեն նշանակութիւնը կամ ոչ այնքան հարմար համար-
ված տերմինը։ Այդ ձեւերն են՝ ակիրալոգիա (անհատկաբանություն), ագ-
նեկտենզիս (զայրացում), ակնեզիս, ամփիդիստոզիս, անակիազիս, անաշնե
(եղծում), անտիֆրազիս, անտիսակոննե (հատուցում), անտիստազիս, անտի-
թեառն, անտիգեալմեննե, պոստոֆիս (ի բաց ձգումն կամ անարգումն), ա-
պոպլանեզիս, պոստորափե (առ այլ դարձումն), աստիսմուս (փաղափարա-
կան ասություն), աուֆսեզիս (լայնատարածում), պրակիեպիա (հակիրճու-
թյուն), ֆարենտիսմուս, ֆիսմուս, համարեակություն, շնորհում, դիալոգիս-
մուս, գրգռում, դիալիզիս, նվագեցում, էպանեղոս (էտադարձում), էպիբոլե,
էպիբրիզիս, էպիմոնե, համառում, էպիպլեֆիս (էպիթիմեզիս), էպիպլեյե,
էպիտորապե, էթալոգիա (վարաբանություն), զարթուցում, հիպեֆսեռեզիս, հիս-
թեռնալոգիա, լեպթալոգիա (մանրամասնաբանություն), մետաբազիս, պա-
րադիաստալե, պարամալոգիա, պլեռնազմոս, հատում, սարկազմոս, ստրեպ-
տոլիտոն, սինատրոլիսմուս, տուպիեզիս և տավտալոգիա։ Հայ ճարտասա-
նութեան պատմութեան մեջ չկա մեկը, որ այսքան մանրամասնութեամբ քննած
լինի ձեւերը, սակայն, ի տարբերութիւն մյուս ճարտասանների, էրզրումեցին
հանգամանորեն քննում և ցույց է տալիս թե՛ փոխակերպութիւնների և թե՛
ձեւերի ոճական առանձնահատկութիւնները, որով պարզ է դառնում, թե ինչ-
պիսի ոճական մեծ հնարավորութիւններ են թաքցնում իրենց մեջ խոսքի
տեխնիկական միջոցները հայոց լեզվում։

Մեր լեզվի ոճական համակարգի վերոհիշյալ ըմբռնումով են առաջնորդվում XVIII դ. անանուն ճարտասանը⁵, XVIII դ. նշանավոր գործիչ, քերական ու ճարտասան Մ. Սեբաստացին⁶, մասամբ նաև XIX դ. ճարտասաններ Ե. Սեթյանը⁷, Ն. Շիշմանյանը⁸ և Մատենադարանի № 10072 ձեռագիր ճարտասանության անանուն հեղինակը։ Ունենալով հայերենի ոճական համակարգի միևնույն ըմբռնումը, այնուամենայնիվ, որոշ գիտակարգերի հարցում այս հեղինակները հանդես են բերում տարակարծություններ։ Այսպես, օրինակ, Մ. Սեբաստացին իմաստների ձևեր չի համարում ներադրությունը և հզգնությունը, իրզրումեցու քիսսմուս օտար տերմինի փոխարեն գործածում

⁵ Մատենադարան, ձեռ. № 2282, էջ 32—89.

⁶ զՀամառոտութիւն ճարտասանութեան դիւրին ոճիւ և վայելուչ օրինակաւ. շարագրեցաւ աշխատասիրութեամբ տեառն Մ խ ի թ ա ր ա յ վ ա ր դ ա պ ե տ ի Ս ե ք ա ս տ ա ց ւ օ յ արքա ճայր կոչեցելոյ (Մատենադարան, ձեռ. № 877, 1765 թ. րնդօրինակութիւն)։

7 Ե Կ Ե Մ Ս Ե Թ Ե Ա Ն, ԱՐՀԵՍՏ ՃԱՐՏԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՆ ԲԱՐՃՐԱԳՈՂՆ ԴԱՍՈՒ, ՎԵՆԵ-
տիկ, 1832:

⁸ «Ժարտասանութիւն Համառոտ արարելի ի նշան Մ. Շիշմանեանի, 1863, էջ 130—134 (Մատենադարան, նորագոյն ձեռագրերի ֆոնդ, № 2 և 37)։

է խաչակերպ և համարնակության փոխարին համակցություն հաջող տերմինները և այլն:

XVIII դ. հեղինակ Ստ. Ադոնցը⁹, վերանայելով նախորդների ըմբռնումները, յուրովի է մոտենում այս հարցերին և արդեն հստակորեն տարբերակված ոճագիտական կարգերի երկու խմբերը՝ փոխակերպություններն ու ձևերը, կոչում մեկ ընդհանուր անունով՝ Ձեվեր, որոնք նա բաժանում է երկու ենթախմբի՝ կոչելով բառերի ձևեր և իմաստների ձևեր: Բառերի ձևերը նա բաժանում է երկու կարգի՝ բառերի ձևեր, որ փոխակերպություններ են (այսպիսի կարգեր է համարում փոխաբերությունը, փոխանունությունը, խելամտությունը և հեգնությունը, որոնց նա ավելացնում է ևս յոթ տեսակ փոխակերպություններ՝ փոխառությունը, այլաբանությունը, պիտակությունը, դերանունությունը, չափազանցությունը և շրջաբանությունը. միասնաբար ու խառն կերպով ներկայացնելով թե՛ բառերի և թե՛ իմաստների փոխակերպությունները), և բառերի ձևեր, որ փոխակերպություններ չեն: Վերջին ենթախմբի ձևերը նա բաժանում է ոչ թե երեք, այլ չորս տեսակի՝ ավելացնելով հակադրությամբ առաջ եկող ձևերը: Նա հարակցությամբ առաջ եկող ձևեր է համարում կրկնությունը (վերակրկնում տերմինի փոխարեն առաջին անգամ Ադոնցն է այս տերմինը գործածում), դարձումը, բաղիյունումը, կրկնապատկությունը, աստիճանը, նույնանշանքը, հոգնահիշությունը, բազմաճյուղությունը և տարանջատությունը (վերջինս ինքն է ավելացնում իբրև կցումով առաջ եկող ձև): Զեղչումով առաջացող ձևեր է համարում խոհականությունը, լծակցությունը և տրոհությունը, իսկ համըմբռնությունը հանում է այս շարքից: Նմանությամբ առաջ եկող ձևերի մեջ դնում է հաբանունը, նույնահիշվել և նույնավերջը, իսկ հակադրությամբ առաջ եկող ձևերի մեջ՝ զարտադրությունը, ներհակադրությունը, հակակցությունը և իմաստազարությունը: Ստ. Ադոնցը փոփոխություն է մտցնում իմաստների ձևերի գասակարգման մեջ: Առաջին անգամ մեր ճարտասանության պատմության մեջ այս ձևերը նա խմբավորում է ըստ գործածության նպատակի և զգալի պարզություն մտցնում նրանց ըմբռնման մեջ: Ըստ այսմ իմաստի ձևերը նա բաժանում է երեք ենթախմբի՝ ԿԻՐՔ ՇԱՐԺՈՂ Ձեվեր (բացականչություն, մականանչություն, տարակուսություն, աղետասեմ, անեծք, հարցում, զանցառություն, լռություն, վստահություն և շնորհում), ԲԵՐԿՐԾՅՆԵԼՈՒ Ձեվեր (բացադարձություն, նկարագրություն, դիմառություն և բարանություն) և ՈՒՄՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ Ձեվեր (հակադրություն, կախում, հաղորդակցություն, նախապաշարում, բաժանողություն, ուղղություն և անցում):

Ըստ երևույթին շատ մեծ է եղել Ադոնցի «Ճարտասանության» ազդեցությունը հետագայի մտածողների վրա, քանի որ, բացառությամբ մի երկու հեղինակների, բոլորն էլ հետևել են նրան, միայն այն տարբերությամբ, որ եթե Ադոնցը ձևեր տերմինի տակ փոխակերպությունները առանձնացնում է բուն ձևերից, ապա նրա հետնորդները՝ էդ. Հյուրմյուզը¹⁰, Ա. Գարագաշյա-

⁹ Ստեփանյան Ս. Ադոնց, նշվ. աշխ.:

¹⁰ էդ. Հյուրմյուզ, Առանձն ճարտասանություն, Վենետիկ, 1839, 1856 և 1866 թվականների հրատարակությունները:

նր¹¹, եղ. Մուրատյանը¹², Ս. Գանթարյանը¹³ և Մ. Ասքանազյանը¹⁴, անտեսելով փոխակերպությունների մի մասը, մյուս մասը խառնում են ձևերին, քննում բառերի ձևերի հետ մեկտեղ, իսկ Մ. Սալլանթյանը¹⁵ փոխակերպությունների մասին ընդհանրապես չի խոսում: Եվ քանի որ հիշյալ հեղինակները էական տարբերություններ չեն տեսնում փոխակերպությունների ու ձևվերի միջև, այդ պատճառով էլ ձև կատեգորիան նրանց համար ձեռք է բերում այլ բովանդակություն, Ձև ասելով նրանք հասկանում են ոչ թե բուն ձևերը, ինչպես որ դրանք ըմբռնվում էին դասական ճարտասանության մեջ, այլ բառերի ու նախադասությունների փոխաբանական գործածությունների մի մասը միայն, որոնց մեջ նաև ձևերի մի մասը: Այսպես, օրինակ, Մ. Սալլանթյանը նույնիսկ փոխակերպություն և ձև տերմինները չի գործածում: Նա խոսում է հավելման կամ ընդլայնման, կրկնության, բացաբաժնության, նմանաձայնության, հակադրության, արտոլության, բակառության և բառափոխության ոճական կարգերի մասին և սրանցից զատ քննում ճարտասանական մի խումբ կարգեր, որոնք նա կոչում է ԽՄԱՍՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ, Այսպիսի կարգեր են աղեհսանքը, անեծքը, անցումը, արտոլությունը, բացաղաժությունը, բացականչությունը, գոհությունը, դիմառնությունը, զանցառությունը, լռությունը, խորհրդակցությունը, խրամատությունը, կրկնությունը, հակափոխությունը, հարցումը, հեզնությունը, նախապաշարումը, հրաբանությունը, որոշողությունը, ուղղությունը և տարակուսությունը: Էդ. Հյուրմուզը բառերի ձևերն ամփոփում է չորս տեսակի մեջ՝ ավելադրություն, զեղչում, հոգնափոխություն և նմանաձայնություն, իսկ իմաստի ձևեր է համարում մի քանի փոխակերպություններ՝ փոխաբերությունը, փոխանունությունը, այլաբանությունը, անվանաստեղծությունը, շրջաբանությունը, սրանց հետ մեկտեղ նաև իսկապես ձևեր՝ չափազանցությունը, բացականչությունը, տարակուսությունը, աղեհսանքը, անեծքը, հարցումը, հաղորդակցությունը, լռությունը, շնորհումը, բացաղաժությունը, դիմառնությունը, նկարագրությունը, հակադրությունը, կախումը, նախապաշարումը, բաժանորդությունը, ուղղությունը, անցումը և արտոլությունը: Ա. Գարագաշյանը ձևերը բաժանում է երկու խմբի: Առաջին խմբի ձևերի մի մասն, ըստ հեղինակի, կազմում է «շրջան»: Դրանք են՝ փոփոխումն, այլասացություն, անվանափոխություն, իմանալ (այսինքն՝ խելամտություն—Պ. Պ.), խարդախություն (այսինքն՝ հեզնանք—Պ. Պ.), առավելություն և «շրջանակով ասացած»: Մյուս մասը, որ «շրջան» չի հանդիսանում, առաջ է գալիս կամ հավելման միջոցով (այսպիսի ձևեր է համարում հետևյալ կարգերը՝ կրկնել, երկրորդել, աստիճան, կից անվանք, բազմադեպ, բազմաճոգ և զատուցանել), կամ նվազման միջոցով (այս ձևերն են՝ լռություն, կցել և անջատել): Մյուս խմբի ձևերը նա բաժա-

11 Ա. Մ. Գարագաշյան, Արուեստ ճարտարափաստության, Վենետիկ, 1844:

12 Եղիսազար Մուրատեան, Նոր ճաշակ դպրութեան կամ համառօտ ճարտասանութիւն, Երուսաղէմ, 1864, նույնի Առձեռն գրագիտութիւն կամ համառօտ ընթացք տրամարանութեան, ճարտասանութեան և քանաստեղծութեան ըստ լը Ֆրանի, Կ. Պոլիս, 1872:

13 Սամուել Գանթարեան, Տարերը հոետորական արուեստի, Վենետիկ, 1875:

14 Միհրան Ասքանազեան, Գրագիտութիւն տեսական և գործնական, Կ. Ա. Պոլիս, 1884:

15 Միքայել Սալլանթեան, Հրահանգ ճարտասանութեան կամ ճառարանութեան, Մոսկով, 1836:

նում է երեք ենթախմբի՝ ՇԱՐԺԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ ՁԵՎԵՐ (գոչումն, երկմտություն, աղաչանք, նվաստություն, անեծք. «հարցումն և զնվիրք անել», գեղչել, լռել և բողոք), ՈՒՍՈՒՅԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ ՁԵՎԵՐ (ընդդիմադրություն, համեցուցանել, հաղորդություն, շնորհել, հառաչագույն, գրավել և ուղղել) և ԶՎԱՐՃԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ ՁԵՎԵՐ (ղարծված, նկարագիր, «երես առնուլ» և նմանություն):

Եղ. Մուրտաչյանը, Ս. Գանթարյանը և Մ. Ասքանազյանը ոճական հիմնական կարգերը բաժանում են բառերի և իմաստների ձևերի, փոխակերպություններն առանց որևէ պատճառաբանության դնելով ձևերի մեջ: Եղ. Մուրտաչյանը բառերի ձևեր է համարում ավելադրությունը, գեղչումը, հոգնաձուլը, նմանածայնությունը, փոխաբերությունը, փոխանունությունը և այլաբանությունը, իսկ իմաստի ձևերը բաժանում է երկու ենթախմբի՝ ԶԳԱԼՈՒ ՁԵՎԵՐ (հարցում, տարակուսություն, բացադարձություն, աղեհսանք, անեծք, բացականչություն, դիմառություն, երգիծանք, լուրություն, փաղցրաբանություն և չափազանցություն) և ԽՈՐՀՆԵԼՈՒ ՁԵՎԵՐ (հաղորդակցություն, կախում, զանց առնելը, ուղղություն, աստիճանավորություն, ակնարկություն, հակադրություն և շրջաբանություն): Ս. Գանթարյանը ձևերի առաջին խումբը բաժանում է երկու ենթախմբի՝ ՊԱՐԶ ԲԱՌԵՐԻ ՁԵՎԵՐ, որոնց մեջ դնում է գեղչումը, ավելադրությունը, արտադրությունը, կրկնությունը, շրջաբանությունը և մեղմաբանությունը, և ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐ, որոնց մեջ դնում է փոխաբերությունը, այլաբանությունը, պիտակությունը, փոխանունությունը և խելամտությունը: Իմաստի ձևերը, որ կազմում են երկրորդ խումբը, նա բաժանում է երեք ենթախմբի՝ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՁԵՎԵՐ (նկարագրություն, լաղդատություն կամ նմանություն, ակնարկություն, անեմանություն, հակադրություն և ընդդիմախոսություն), ԿԻՐՔ ՇԱՐԺՈՂ ՁԵՎԵՐ (բացականչություն, բացադարձություն և դիմառություն) և ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԿՆԴՄԻՔՆԵՐ (հեգնություն, զվարճաբանություն, չափազանցություն, նվազեցում, կախում, ուղղություն, լուրություն, շնորհում, զանցառություն, հաղորդակցություն, հարցում և տարակուսություն): Մ. Ասքանազյանը բառերի ձևերը բաժանում է երկու տեսակի՝ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ (զարտադրություն, գեղչում, ավելադրություն, բակառություն, կրկնություն, զատություն և հավելված) և ՇՐՋԱՆՔ (փոխաբերություն, այլաբանություն, պիտականունություն, անվանափոխություն, խելամտություն և դերանունություն): Իմաստի ձևերը նա դասդասում է հետևյալ չորս խմբերի մեջ՝ ԶԳԱՅՈՒՄ ԲԱՅԱՏՐՈՂ ՁԵՎԵՐ (աղեհսանք, լրծում, անեծք, երդում, բացականչություն, բացադարձություն և ընդունություն), ԿՆԴՄԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՁԵՎԵՐ (հարցում, տարակուսություն, զանցառություն, լուրություն, ուղղություն, կախում, ենթադրություն, չափազանցություն, հեգնություն, հաղորդակցություն, շնորհում, թուլություն և կանխում), ԻՄԱՍՏՆԵՐԸ ԶՈՐԱՅՆՈՂ ՁԵՎԵՐ (վճիռ, մակագանչություն, աստիճանում, նմանաբանություն կամ բաղդատություն, հակադրություն, եաաշրջություն և ակնարկություն) և ԻՄԱՍՏՆԵՐՆ ԸՆԴԱՅՆՈՂ ՁԵՎԵՐ (շրջաբանություն, կուտակում կամ թվումն մասանց, սահման և նկարագրություն):

Թեև այս հեղինակները ձև հասկացության մեջ դնում են նոր բովանդակություն և շեղվում են մեր լեզվի ոճական համակարգի ավանդական ըմբռ-

նումից, այնուամենայնիվ իրենց հետազոտություններով ընդլայնում են հայագիտության մեջ գոյություն ունեցող գիտելիքների սահմանները խոսքի տեխնիկական միջոցների վերաբերյալ և նկարագրում ոճական նոր երևույթներ՝ ու կարգեր, որոնք հայտնի չեն եղել անցյալում: Այսպես, օրինակ, պիտակության ու տարանջատության մասին առաջին անգամ զաղափար է տալիս Ստ. Ազոնցը, աննմանության ու ակնարկության մասին՝ Ս. Գանթարյանը, բաղառության ու նկարագրության մասին՝ Մ. Ասքանազյանը և այլն: Հայ ոճագիտությանը նրանց մատուցած ծառայության մի արժանիքն էլ կայանում է նրանում, որ աշխատելով ստեղծել և ճշտել եղած ոճագիտական տերմինները, նրանք միաժամանակ որոնումներ էին կատարում ձևերի դասակարգման ու խմբավորման ուղղությամբ: Եթե հայ ճարտասանության խոշորագույն գեմբերից մեկը՝ Ստ. Ազոնցը ձևերը բաժանում է երեք խմբի՝ կիրք շարժող ձևեր, բերկեցեցելու ձևեր և ուսուցման համար պիտանի ձևեր, ապա նրան հաջորդող մյուս ճարտասանները ևս ձևերի մասին խոսելիս անպայման դրանք խմբավորում են ըստ ձևերի վերառությունների կամ նշանակությունների, ըստ որում Եփրեմ Սեթյանը դրանք բաժանում է երկու խմբի՝ զվարհացեցելու ու հաճեցեցելու և ուժգնության ու հոգեշարժ ձևերի, էդ. Հյուրմյուզը ևս բաժանում է երկու խմբի՝ զգալու ձևերի և խորհելու ձևերի, Ս. Գանթարյանը՝ երեք խմբի՝ նկարագրական ձևերի, կիրք շարժող ձևերի և ճառառական կեղծիքների, իսկ հին ճարտասանության և նոր ոճագիտության սահմանագծում Մ. Ասքանազյանը դրանք բաժանում է չորս խմբի՝ զգացում բացատրող ձևեր, կեղծիք պարունակող ձևեր, իմաստները զուգացնող ձևեր և իմաստներն ընդլայնող ձևեր:

Ամփոփելով մեր ասածները հայոց լեզվի ոճական համակարգի մասին XVII—XIX դդ. հայ մտածողների ոճագիտական ըմբռնումների զարգացման պատմության վերաբերյալ, նշենք, որ դրանք կազմում են երկու ուղղություն: Առաջին շրջանի մտածողները՝ Հովհ. Հոլովը, Խաչ. Էրզրումեցին և նրանց օրինակով Մխ. Սեբաստացին, մասամբ Ստ. Ազոնցն ու Եփր. Սեթյանը հայերենի ոճական հիմնական վարքերը հունահռոմեական դասական ճարտասանների նման բաժանել են երկու խմբի՝ ՓՈՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (տրոպ) և ՁԵՎԵՐԻ (ֆիգուրա), սկզբունքալիս տարբերություն տեսնելով դրանց միջև՝ իբրև խոսքի երկու՝ միանգամայն տարբեր դերեր ու արժեքներ ունեցող տեխնիկական միջոցներ: Ըստ այդմ թե՛ փոխակերպությունները և թե՛ ձևերը նրանք բաժանել են երկուական ենթախմբերի՝ ԲԱՌԵՐԻ ՓՈՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ու ԻՄԱՍՏՆԵՐԻ ՓՈՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԲԱՌԵՐԻ ՁԵՎԵՐԻ ու ԻՄԱՍՏՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ, մի դասակարգում, որն առավել ճշտությամբ է համապատասխանում մեր լեզվի ոճական համակարգին, ուստի և օգտակար է նաև գործնական տեսակետից:

Սկսած XIX դ. 30-ական թվականներից հայ ճարտասանները (Մ. Սալյանի, էդ. Հյուրմյուզ, Ա. Գարագաշյան, Նդ. Մուրատյան, Ս. Գանթարյան, Մ. Ասքանազյան և ուրիշներ) ոճական հիմնական կարգերը դիտում են բառերի և իմաստների ձևեր, միմյանց խառնելով փոխակերպություններն ու ձևերը: Այդպիսի դասակարգումը պակաս գիտական կարևորություն ունենալով՝ գործնական արժեք էլ չի ներկայացնում և վերածվում է ինքնանպատակ մի բանի: Մասամբ այս է պատճառը, որ ոճագիտական գրականության մեջ

մեր օրերում մուտք գործեց ռեալիստական հիմնական կարգերի գրականագիտական դասակարգումը, ըստ որի դրանք ընդգրկում են պատկերավորության և արտահայտչականության միջոցների վրա: Ստեղծված այսպիսի պատկերացումը ճշտորեն չի արտացոլում մեր լեզվի ռեալիստական համակարգի էությունը և չի բխում նրանից: Սիստեմավորումը, տեղաբաշխումը, գիտակարգների հարաբերությունների որոշումը գիտության կարևոր խնդիրներից մեկն է՝ ոչ միայն երևույթների ճանաչման, այլև նրանց ուսուցման տեսակետից: Եթե ճիշտ չեն սիստեմավորումն ու դասակարգումը, դիտակարգների տեղաբաշխումն ու դրանց հարաբերությունների որոշումը, ապա համապատասխանարար թերի են նաև այդ երևույթների ըմբռնումները:

Լեզվագիտության զարգացման արդի փուլում ռեալիստությունն իբրև լեզվաբանական գիտաճյուղ գտնվում է դեռևս իր կազմավորման ընթացքում: Ուստի, մեր ռեալիստների առաջ խնդիր է ծառանում գրականորեն յուրացնել մտավոր մշակույթի այս ընազավառում ձևեր բերված անցյալի նվաճումները, նրանց տալ ժամանակակից տեսք և նոր ուսումնասիրություններով հայ ռեալիստությունը բարձրացնել ժամանակակից լեզվաբանական գիտությունների մակարդակին:

СТИЛИСТИЧЕСКАЯ СИСТЕМА АРМЯНСКОГО ЯЗЫКА В РИТОРИЧЕСКИХ ТРУДАХ XVII—XIX ВЕКОВ

П. М. ПОГОСЯН

Р е з ю м е

О технических средствах речи говорили древнегреческие, а впоследствии и римские мыслители еще до нашей эры.

Унаследовав учение древних мыслителей о тропах и фигурах речи, армянские мыслители, начиная с XVII столетия, разрабатывали в своих риторических трудах учение о стилистической системе армянского языка.

Развитие стилистической системы армянского языка можно разделить на два этапа. На первом этапе (XVII—XVIII вв.) основные стилистические категории делятся на тропы и фигуры, причем тропы подразделяются на тропы слов и на тропы мысли, а фигуры — на фигуры слов и на фигуры мысли. Эта классификация основных стилистических категорий более точно соответствует содержанию технических средств речи армянского языка.

Начиная с конца XVIII века все технические средства речи воспринимаются теоретиками армянского красноречия как фигуры, чем и было вызвано отнесение к понятию «фигуры» разнообразных стилистических категорий. Это смешение внесло неясность в толкование основных стилистических категорий; такое понимание стилистической системы армянского языка существует и в настоящее время.